

**ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ-ԲԱՅԱԿԱՆ ՆՈՐՄԸ ԵՎ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» (ՀԱՏՈՐ 2) ԱԿՍԴԵՄԻԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. ձևաբանական-բայական նորմ, ակադեմիական հրատարակություն, տեղաշարժային երևույթ, անկանոն բայեր, շեղումներ, հնացած տարբերակներ:

Ключевые слова и выражения: морфологический-глагольный норм, академическая публикация, феномен перемещения, неправильные глаголы, отклонения, устаревшие версии.

Key words and expressions: morphological-verbal norm, academic publication, moving phenomenon, issegrular verbs, deviations, old versions.

Բայը քերականական հատկանիշներով ամենից հարուստ խոսքի մասն է: Քերականական կարգերով հարուստ այս խոսքի մասին բնորոշ են տեղաշարժերը, ինչպես նաև զգալի քանակություն կազմող սխալ կիրարկություններ:

«Ժամանակակից հայոց լեզու (հատոր 2)» ակադեմիական հրատարակությունում (Այսուհետև՝ Հատոր 2) նշված է, որ *ղիպչել, թաքչել, թռչել, կորչել, կպչել, հալչել, հանգչել, սառչել, ուռչել, փախչել, փլչել** (257) բայերն ունեն *-չ-* սուսկածանց: Այս բայերից շատերը գրական լեզվում պահպանել են *-չ-* ներածանցով բայի հատկանիշները: Մ. Ասատրյանը այս բայերից անդրադառնում է միայն երեքին՝ նշելով, որ *չել* ձևերը տեղի են տալիս *նել* ձևերին, ինչպես՝ *թռչել-թռնել, կպչել-կպնել, փախչել-փախնել*: Տեղին է հիշատակել, որ Ռ. Սաքապետոյանը առաջարկում է *չ* ներածանցով բայերի քանակը սահմանափակել 7 բայերով՝ *ղիպչել, թռչել, կորչել, կպչել, հանգչել, սառչել, փախչել*: Խոսակցական լեզվում հանդիպող *ղիպչեցի, կպչեց* և նման ձևերը գրական լեզվում գործածություն չունեն և հանձնարարելի չեն: *Հալչել* և *փլչել* բայերն ունեն նաև *-վ-* ածանցով տարբերակներ (*հալվել, փլվել*): Եվ դա արձանագրվում է նաև գրական գրավոր խոսքում, բայց այս մասին հատոր 2-ում նշված չէ: Մենք, կարծում ենք, որ *հալվել* և *փլվել* ձևերն ավելի տարածված են և կանոնական: Նշենք, որ *թաքչել*-ը որպես սկզբնաձև, դուրս է մղված արդի գրական արևելահայերենից, գրեթե անգործածական է: Դրան փոխարինել է *թաքնվել* սկզբնաձևը: Ներկայացնենք հատոր 2-ում առկա *-չ-* սուսկածանցով բայերի

օգտագործման ճշգրիտ քանակը՝ ըստ արևելահայերենի ազգային կորպուսի տվյալների: Այսպես՝

դիպչել	թափել	թռչել	կորչել	կպչել	հալչել	հանգչել	սառչել	ուռչել	փախչել	փլչել
355	6	978	203	156	18	95	78	48	2271	9

Նկատելի է, որ գործածական բարձր հաճախականություն ունեն *դիպչել, թռչել, կորչել, կպչել, փախչել* անորոշ դերբայները: Հավելենք, որ արդի գրական լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *չել*-ով կազմությունները ակնհայտորեն գերակշռում են, և *նել*-ով տարբերակները գերազանցապես գործածվում են խոսակցական բանավոր լեզվում:

Յու. Ավետիսյանը ընդգծում է, որ արդի հայերենում երկրորդ ապառնի դերբայների մեջ որպես ընդհանուր տեղաշարժային երևույթ զարգանում է թանձրացական-առարկայական նշանակությունը, և, այդպիսով, մի շարք բայերի ապառնիի այդ ձևերը, աստիճանաբար զրկվելով իրենց բայական նշանակությունից, վերածվում են գոյականների: Հավելենք, որ ոչ բոլոր բառերը կարող են «մաքուր գոյականներ» համարվել, քանի որ շատ ձևերում ավելի զգալի է բայական իմաստը՝ գործողության՝ ինչ-որ բան անելու իմաստը: Ա. Մարգարյանը տալիս է հետևյալ բաժանումը.

գ	ած	գ. ած
այրելիք	բռնելիք	բերելիք
առնելիք	գրելիք	կատարելիք
ավելացնելիք	գանձվելիք	հաղորդելիք
արտահանելիք	գնալիք	ստանալիք
գիտելիք	գոյանալիք	տալիք
երգելիք	դիմանալիք	ընտրելիք
ըմպելիք	իրացվելիք	թարգմանելիք
կորցնելիք	կազմվելիք	լինելիք
ճաշակելիք		լսելիք
մտածելիք		հայտնելիք
		տանելիք

Մ. Ասատրյանի բնութագրմամբ՝ որպես «մաքուր գոյականներ» նշվում են հետևյալները՝ **գիտելիք, ծխելիք, հիշելիք, պատկանելիք, սպասելիք, հագնելիք, ըմպելիք, գալիք** և այլն: Հատոր 2-ում՝ որպես «մաքուր

գոյականներ» նշվում են հետևյալները՝ **գալիք, սպասելիք, անելիք, խաղալիք** (329) և այլն: Այս ձևերը համապատասխան կիրառություններում պահպանել են նաև իրենց դերբայական արժեք, ինչպես՝ *գալիք օրեր, սպասելիք օր* և այլն:

Ձևաբանական-բայական նորմի շրջանակում հատոր 2-ում առկա են բայի խոնարհման հարացույցի նկարագրության անճշտություններ՝

- սոսկածանցավոր և պատճառական բայերի արգելական հրամայականների կազմություն,
- **ա** խոնարհման աններածանց բայերի հոգնակի արգելական,
- **ե** խոնարհման աններածանց բայերի հոգնակի հրամայական,
- **չ** ներածանցով բայերի անցյալ կատարյալի կազմություն:

Հատոր 2-ում բոլոր բայերի համար արգելական հրամայականի եզակիի կազմության ձև է արձանագրվում հետևյալը. եզակի արգելականը կազմվում է՝ հրամայականի դրական բայաձևերի վրա ավելացնելով մի ժխտական կամ արգելական մասնիկը՝ *վազի՛ր-մի՛ վազիր, վերցրո՛ւ-մի՛ վերցրու, պահի՛ր-մի՛ պահիր* (416) և այլն: Հավելենք, որ սա կենդանի լեզվում արդեն ընդհանրական է դարձել: Մի շարք ներածանցավոր բայերի համար նշվում են նաև գուգաձևություններ. «**Ան, են, ցն** ածանցներն ունեցող բայերի արգելական հրամայականը կազմվում է նաև ներկայի հիմքին ավելացնելով **ա** կամ **ի**. այսպես՝ **մի՛ հեռանա, մի՛ մոտանա, մի՛ վերցնի, մի՛ վախեցնի, մի՛ մոտենա, մի՛ վախենա** և այլն: **Ա** խոնարհման ածանցավոր բայերի մոտ երբեմն ավելանում է նաև **ր**, ինչպես՝ **մի՛ վախենար, մի՛ հեռանար, մի՛ մոտենար** և այլն»¹: Հատոր 2-ում նշված չէ **ն**, **չ** ներածանց ունեցող բայերի արգելականի՝ ներկայի հիմքից կազմության հարցը. պարզ չէ, թե գրքի հեղինակները այդ բայերի համար ընդունում են արդյոք *մի՛ փախչիր, մի՛ մտնիր* և նման տարբերակները, որոնք այլ աշխատություններում նշվում են որպես գուգաբանություններ:

Նշենք, որ հատոր 2-ում կանոնական կազմություններին գուգահեռ ամրագրվում են ձևեր, որոնք այլ աղբյուրներում նշվում են որպես հնացած ձևեր՝ *մի՛ վախենար, մի՛ մոտենար, մի՛ հեռանար* (417): Ուշագրավ է, որ հատոր 2-ում **ա** խոնարհման բայերի հոգնակի հրամայականի կազմության միակ ճիշտ տարբերակներ են առանձնացվում ներկայի հիմքից **-աք** մասնիկով ձևերը, ինչպես՝ *մի՛ կարդաք, մի՛ մոտենաք, մի՛ հեռանաք*: Գրական արևելահայերենի նորմի տեսակետից այս ձևերը հնացած են և գործածությունից աստիճանաբար դուրս են մղվում:

¹ Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974, էջ 417:

Ե խոնարհման պարզ և կրավորական բայերի հրամայականի դրական խոնարհման հոգնակիում **-(եց)եք**-ով վերջացող ձևերը՝ **գրե՛ք** կամ **գրեցե՛ք**, արգելականում ունենում են **-եք** վերջավորությունը՝ **մի՛ գրեք, մի՛ խաբվեք**²: Նշենք, որ սխալ են ավելորդ **-եց**-ով ձևերը՝ **մի՛ գրեցեք, մի՛ խաբվեցեք**:

Հալչել, սառչել, ուռչել (257) բայերը գրական բանավոր, ինչպես նաև գրավոր խոսքում, ինչպես ասվեց, այսօր իրենց տեղը զիջում են աններածանց **հալվել, սառել, ուռել** սկզբնաձևերին, և հետևաբար դրանց պատճառականները ձևավորվում են աններածանց բայերի նման, այսպես՝ **հալվել-հալեցնել, սառել-սառեցնել, ուռել-ուռեցնել**:

Արևելահայերենում գուգահեռ գործածության մեջ մտան նաև ներկայի հիմքից ձևերը՝ **գրե՛ք // գրեցե՛ք, խմե՛ք // խմեցե՛ք, վազե՛ք // վազեցե՛ք, կանգնե՛ք // կանգնեցե՛ք** (416): Ներկայացնենք հատոր 2-ում առկա այս բառաձևերի օգտագործման ճշգրիտ քանակը՝ ըստ արևելահայերենի ազգային կորպուսի տվյալների:

գրե՛ք	գրեցե՛ք	խմե՛ք	խմեցե՛ք	վազե՛ք	վազեցե՛ք	կանգնե՛ք	կանգնեցե՛ք
ք	ք	ք	ք	ք	ք	ք	ք
737	330	354	126	109	24	327	154

Ժամանակակից հայերենում **չ** ներածանցով բայերի անցյալ կատարյալի հարացույցն ունի հետևյալ պատկերը.

թռչել		դիպչել		փախչել	
թռա	թռանք	դիպա	դիպանք	փախա	փախանք
թռար	թռաք	դիպար	դիպաք	փախար	փախաք
թռավ	թռան	դիպավ	դիպան	փախավ	փախան

² Յու. Ավետիսյան, Լ. Թեյլան, Լ. Սարգսյան, Լ. Ավետիսյան, Ուղեցույց հայոց լեզու, գիրք Ա, Եր., 2017, էջ 190:

* Այսուհետև **Ժամանակակից հայոց լեզու (հատոր 2)**-ից (Երևան, 1974) մեջբերումների էջերը կտրվեն շարադրանքում՝ օրինակից անմիջապես հետո՝ փակագծերի մեջ:

կորչել		հանգչել	
կորա	կորանք	հանգա // հանգեցի	հանգանք // հանգեցինք
կորար	կորաք	հանգար // հանգեցիր	հանգաք // հանգեցիք
կորավ	կորան	հանգավ // հանգեց	հանգան // հանգեցին

կպչել		ուռչել	
կպա	կպանք	ուռեցի // ուռա	ուռեցինք // ուռանք
կպար	կպաք	ուռեցիր // ուռար	ուռեցիք // ուռաք
կպավ	կպան	ուռեց // ուռավ	ուռեցին // ուռան

սառչել	
սառեցի // սառա	սառեցինք // սառանք
սառեցիր // սառար	սառեցիք // սառաք
սառեց // սառավ	սառեցին // սառան

Ուռչել բայի ոչ ցոյական՝ արմատական ձևերը՝ ուռա, ուռար և այլն, գործածությունից դուրս են մղվում. ակնհայտորեն տարածում են ստանում այդ բայի ցոյական հիմքով կազմությունները՝ ուռեցի, ուռեցիր, ուռեց, ուռեցինք, ուռեցիք, ուռեցին: Զ. Աղաջանյանի նշում է, որ գործածական են նաև ներկայի հիմքից կազմված խոսակցական ձևերը՝ **ուռչեցի, ուռչեցիր**³:

Յու. Ավետիսյան փաստում է, որ **սառչել** բայի համար ցոյական՝ *սառեցի, սառեցիր, սառեց, սառեցինք, սառեցիք, սառեցին* ձևերը ավելի գործածական են, քան արմատական ձևերը՝ *սառա, սառար, սառավ* և այլն⁴:

Հատոր 2-ում մանրամասն անդրադարձ չի կատարվել այս բայերի խոնարհման համակարգին: ԱՐԵՎԱԿ-ի օգնությամբ ներկայացնենք հարացույցում առկա զուգաձևությունների օգտագործման ճշգրիտ քանակը: Այսպես՝ ուռա՝ 606, ուռեց՝ 43 // ուռավ՝ 43, ուռանք՝ 1, ուռեցին՝ 23 // ուռան՝ 77, սառեցի՝ 25 // սառա՝ 508, սառեցիր՝ 4, սառեց՝ 343 // սառավ՝ 102, սառեցինք՝ 4 // սառանք՝ 4, սառեցիք՝ 1 // սառաք՝ 1, սառեցին՝ 84 // սառան՝ 523:

³ Զ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 285:

⁴ Յու. Ավետիսյան, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Եր., 2011, էջ 64:

Արդի գրական արևելահայերենի նորմի տեսակետից անկանոն բայերին վերաբերող մի շարք փաստեր, որոնք առկա են հատոր 2-ում, այսօր քննության չեն դիմանում: Հատոր 2-ում վկայված անկանոն բայերն են՝ *գալ, լալ, տալ, ասել, զարկել, բերել, ուտել, բանալ, բառնալ, դառնալ, լվանալ, կենալ, անել, դնել, տանել, առնել, ելնել, թողնել, տեսնել, լինել* (425): Հավելենք, որ անկանոնությունները սովորաբար դրսևորվում են կատարյալի հիմքից կազմված ձևերում և հատկապես հրամայականում:

Ինչպես տեսնում ենք, հատոր 2-ում անկանոն բայերի շարքում ներկայացվում են **բանալ, բառնալ** բայերը: Դրանք ներկայումս հնացած են և անգործածական: Դրանց փոխարեն գործածվում են *բացել, բարձել* բայերը, որոնցից երկրորդը կանոնավոր է: Այս մասին հատոր 2-ում ևս նշված է: Հավելենք, որ **բանալ** և **բառնալ** անկանոն բայերը՝ որպես սկզբնաձևեր գրական լեզվում գործառույթ չունեն:

Հատոր 2-ում ընդգրկված **կենալ** անկանոն բայի ուղիղ և թեք ձևերը արդի արևելահայերենում, դուրս են մղվել գործածությունից: Այս բայի նկարագրությունը հատոր 2-ում տրվում է **կենալ** սկզբնաձևով, բայց հարացույցը ներկայացվում է հարադրությամբ՝ (*վեր*) **կացա, կացար** և այլն: Հատոր 2-ում տրված է նաև **մի՛ վեր կենա, մի՛ վեր կենաք** ձևերը: Նշենք, որ **կենալ** բայը գրական լեզվում փոխարինվել է **մնալ** բայի ուղիղ և թեք ձևերով, ոչ թե՛ **կա ց, կեցի՛ր, կացե՛ք, մի՛ կաց**, այլ՝ **մնա՛, մնացե՛ք, մի՛ մնա**⁵:

Նկատելի է, որ գրական արևելահայերենի նորմի տեսակետից **զարկել** բայը աստիճաբար իր տեղը զիջում է **խփել** և **հարվածել** բայերին: ԱՐԵՎԱԿ-ի տվյալներից պարզ է դառնում, որ **խփել** բայի ձևերը առավել շատ են գործածվում, քան **զարկել**-ինը՝ **խփեցիր՝ 81 // զարկիր՝ 79 // զարկեցիր՝ 23, խփեց՝ 3.332 // զարկեց՝ 1.338, խփեցինք՝ 64 // զարկինք՝ 12 // զարկեցինք՝ 21, խփեցին՝ 545 // զարկին՝ 160 // զարկեցին՝ 183:**

Ուշագրավ է, որ **տալ, անել, դնել** բայերի համար բեական հիմքով ենթակայական դերբայի կազմությունները արձանագրված չեն հատոր 2-ում: Մ. Ասատրյանը այս անկանոն բայերի համար նշվում է ենթակայական դերբայի՝ ներկայի և անցյալի հիմքերից կազմվող գուգաձևեր՝ **տանել/տարող, անել/արող, դնել/դրող**:

Հատոր 2-ում ընդգրկված *ասել, անել, բերել, դնել, թողնել, լալ, տալ* անկանոն բայերն անցյալ կատարյալում ունեն գուգաձևեր՝ կազմված ներկայի կամ անցյալի հիմքից՝ **ասացի // ասի, արեցի // արի, բերեցի // բերի, դրեցի // դրի, թողեցի // թողի, լացեցի // լացի, տվեցի // տվի**: Կարծում ենք, որ դրանցից գրական լեզվում գործածական և հանձնարարելի են առաջինները:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 56:

Երկրորդները ունեն ընդգծված խոսակցական երանգ: Ներկայացնենք այս զուգաձևությունների օգտագործման ճշգրիտ քանակը՝ ըստ արևելահայերենի ազգային կորպուսի տվյալների: Այսպես՝

ասացի	ասի	արեցի	արի	բերեցի	բերի
18661	11106	1276	15105	646	3553

դրեցի	դրի	թողեցի	թողի	լացեցի	լացի	տվեցի	տվի
745	953	611	558	18	806	1661	2604

Ձ. Աղաջանյանը գրում է, որ անկանոն բայերի ոլորտում ցանկալին հակահամակարգային ձևերի համակարգայնացումն է, կանոն դարձած անկանոնությունների՝ համակարգային օրինաչափություններով ձևելը, որով և տարբերակային զուգաձևությունները լեզվի զարգացմանը զուգընթաց աստիճանաբար կղաղարեն այդպիսին լինելուց կամ «կմեղմացվեն»⁶:

Այսպիսով, հայոց լեզվի, մասնավորապես ժամանակակից արևելահայերենի նորմավորման գործընթացները, համակարգում ընթացող տեղաշարժերով պայմանավորված, նորմատիվ քերականության մեջ ամբողջականացման կարիք ունեն: Ձևաբանական-բայական նորմի և կիրարկության փոխհարաբերություններում շեղումները հատկապես շատ են բայի խոնարհման և հատկապես անկանոն բայերի համակարգում:

Վ. Բերբերյան

Ձևաբանական-բայական նորմ և «Ժամանակակից հայոց լեզու (հատոր 2)» ակադեմիական հրատարակությունը Ամփոփում

«Ժամանակակից հայոց լեզու (հատոր 2)» ակադեմիական հրատարակությունը գրվել է շուրջ կես դար առաջ՝ 1974թ., և լեզվի զարգացման արդի փուլում հայոց լեզվի ձևաբանական-բայական նորմին վերաբերող որոշ մոտեցումներ հնացել են:

Մեր այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել ժամանակակից հայերենի ձևաբանական-բայական նորմով սահմանված կանոնների ամբողջությունը «Ժամանակակից հայոց լեզու (հատոր 2)» ակադեմիական հրատարակությունում և դրանց իրացումը ժամանակակից գրական հայերենում:

⁶ Ձ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 324:

В. Берберян

Морфологический-глагольный норм и «Современный армянский язык (том 2)» академическое издание

Резюме

Академическое издание «Современный армянский язык» (том 2) было написано около полувека назад, в 1974 году, и в текущем этапе некоторые подходы к морфологическим-глагольным нормам армянского языка устарели.

Целью данной статьи является изучение всех правил современного армянского морфологического-глагольного цельностных норм в академическом издании современного армянского языка (том 2) и их применения в современном литературном армянском языке.

V. Berberyan

**Morphological-verbal norm and the academic publication of
"Modern Armenian (volume 2)"**

Summary

The academic publication of "Modern Armenian (volume 2)" was written about half a century ago in 1974 and some approaches to Armenian morphological-verbal norm in modern stage of language developmenq have become obsolete.

The present paper studies the whole set of rules defined in terms of morphological-verbal norm of modern Armenian in the academic publication of "Modern Armenian (volume 2)" and usage of them in modern literary Armenian.

*Խմբագրություն է ուղարկվել 26.08.19
Հանձնարարվել է գրախոսության 05.09..19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19*